



Խմբագրատան հասցէ՝

Պէյրուզ. Նահր Իպրահիմ փ.,
Թեքէէն Կեդրոն, 2-րդ յարկ, ԺըմէյզիԵրեւան. Մամուլի շէնք, Հիմնական
Մասնաշէնք, 2-րդ յարկ, 213ա,
Արշակունեաց 2

ZARTONK DAILY NEWSPAPER

زارتونك جريدة سياسية أرمنية

Հինգշաբթի 25.08.2022

85րդ Տարի, թիւ 85 (22,555)

1500 Լ.Ո. / 8 Էջ

© zartonkadl@gmail.com

+961 1 444225
+961 81 306 447www.zartonkdaily.net
facebook.com/zartonkdaily

P.O.BOX 11-617 Beirut-Lebanon

Տեսանկիւն

Տարբերակ մը Որուն Վրայ Կարելի Է Յենիլ

Մեր հայրենիքը տակաւին կը տուայտի անորոշութեան մէջ: Ունինք անհասկանալի պատկանելիութեամբ ու ծրագիրներով իշխանութիւն մը, որ ամէն գնով «խաղաղութիւն-խաղաղութիւն» կ'ուզէ խաղաղ թշնամիին հետ: Ունինք նաեւ անհեռանկար ու սոսկ լոգունգներով առաջնորդող այսպէս կոչուած ընդդիմութիւն մը, որ իր կարգ մը առաջնորդներուն ինքնակեդրոն եւ կուսակցական աժան փրոփակակնտի վրայ հիմնուած գործելաոճով, ոչ միայն ուղակի կամ անուղակի կերպով աւելի կը նպաստէ Նիկոլ Փաշինեանին վարչապետի պաշտօնին վրայ երկարակեցութեան, այլ նաեւ իրեն մենաշնորհը կը կարծէ Փաշինեանի հրաժարականը պահանջելու օրակարգը:



Մինչ այս քաջքուրքը կ'երկարի, մենք ամէն օր պապենական հողեր եւ անգին ու անչափ ազգային արժանապատուութիւն կը կ'որսնցնենք:

Այս դժբախտ երեւոյթին գուգահեռ, վերջերս յայտնուեցաւ երեւոյթ մը, որ մարմնաւորուեցաւ Էտկար Ղազարեան կոչուող անձնաւորութեամբ մը, որ նորութիւն մտցուց Հայրենիքի փրկութեան միտումնաւոր աշխատանքներու դաշտին մէջ:

Արդարեւ, ան սեփական նախաձեռնութեամբ եւ ուժերով Հայաստանի անկախութեան հռչակագրի ընդունման օրը ընտրելով, որպէս խորհրդանշական թուական ու անոր կ'ետերը՝ որպէս պայքարի նոր եւ գործնական ոճի բովանդակութիւն, հանրահաւաքի հրաւիրեց ժողովուրդը Հանրապետութեան հրապարակին վրայ:

Այսօր, այստեղ կ'ուզեմ կարգ մը անձնական տպաւորութիւններ արձանագրել նշեալ նախաձեռնութեան մասին, մեկնաբանութիւնը ձգելով մեր ընթերցողներուն:

Հանրահաւաքին դրական յատկանիշները.

1. Կեդրոնական դէմքը հարուստ էր իմացական եւ դիւանագիտական կարողութիւններով, ինչպէս նաեւ բարեկիրթ էր իր արտասանած ճառին լեզուին ու բովանդակութեան մէջ:


2. Ներկայութիւնը, ընդհանրապէս նուազ քաղաքականացուած ինչպէս նաեւ ընդհանրապէս անկուսակցական համակիրներով համալրուած էր:

Շար. Էջ 02

Լիբանանեան Լուրեր

Քայլ Մը Եւ Մօտեցանք Վերջին Արարի

Պէյրուզի աղետեալ Նաւահանգիստի ցորենի շտեմարանի առնուազն երեք սիւներ եւս ինկան: Այսպիսով քայլ մը եւս մօտեցանք Նաւահանգիստի ցորենի «պատմական» շտեմարանը ամբողջութեամբ գետնին հաւասարեցնելու փուլին: Ան շուտով յուշ՝ վկայութիւն մը մը պիտի ըլլայ Լիբանանի լաւագոյն օրերուն: Մինչ այդ, Պէյրուզի պայթումին իրական բացայայտումը, կամ դատական ճանապարհով հանգուցալուծումը տակաւին կը յամենայ:



Հայկական Լուրեր

Կոչ Կ'ընենք Լիարժէք Կերպով Ապահովելու Տեղեկացուած Ըլլալու ԱՅ Քաղաքացիներուն Իրաւունքը. ԱՅ ՄԻՊ

Արցախի Հանրապետութեան Սահմանադրութեան 51-րդ յօդուածը կ'ամրագրէ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն եւ պաշտօնատար անձերու գործունեութեան մասին տեղեկութիւններ ստանալու իրաւաբանչիւրին իրաւունքը: Այս իրաւունքը ապահովելու համար աւելի ցած իրաւաբանական ուժ ունեցող իրաւական ակտերու մէջ նախատեսուած է նաեւ պետական տարբեր մարմիններուն՝ «թուլատրելի» սահմաններու մէջ իրապարակային գործելու պարտականութիւնը: Այս մասին, այսօր, յայտարարութիւն տարածած է ԱՅ մարդու իրաւունքներու գրասենեակը:



«Արցախի Հանրապետութեան քաղաքացիները ունին Արցախի մէջ եւ անոր շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններուն մասին իրազեկուած ըլլալու իրաւունք եւ բարոյական անհրաժեշտութիւն: Այդ իրաւունքը կը վերաբերի նաեւ այնպիսի իրադարձութիւններու, որոնք յառաջիկայ ծրագիրներ են եւ ուղղակիօրէն կ'առնչուին անձնական եւ հանրային կեանքի կազմակերպման որոշակի գործընթացներու (ճանապարհներու կառուցում եւ երթուղիներու փոփոխութիւն, համացանցի ապահովում, էլեկտրականութեան եւ կազմատակարարում, կապի այլ միջոցներու տեղադրում եւ այլն):

Շար. Էջ 07



ՎԱՀԱՆ ԹԵԹԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆ

2022 – 2023 Տարեշրջանի Կրթաթոշակը Անվճար Է

Արձանագրութիւնները կը վերսկսին Սեպտեմբեր 6-ին Երկուշաբթիէն Ուրբաթ կ.ա. Ժամը 9:00 – 12:00

☎ +961 1 260 525 / +961 1 260 574

✉ info@vahantekeyan.com

🌐 vahantekeyan.com

Տեսանկյուն

Տարբերակ մը Որուն Վրայ Կարելի Է Յենիլ

Սկիզբը Էջ 01

3. Հետաքրքրական բովանդակություն ունեւ: Յառաջ բերուած միտքերը լաւապէս փաստարկուած էին:

4. Հեռու Էր սոսկ ամփոխաժարական լոգունգներէ:

5. Կեդրոնական դէմքը անժխտելի հռետորական ձիրք ու սրտամօտիկ մեղմ հիւմըր ունեւ:

6. Պատասխանատու ու հետեւողական մօտեցումն ու երկար ու ջանասիրաբար պատրաստուածութիւնը ակնյայտ Էր:

7. Բացակայ էին դասական հանրահաւաքները յատկանշող ջուրի շիշերը, սանտուիչները, չափազանցուած ոգեւորութիւնը, մակերեսային կարգախօսները, աւելորդ աղմուկն ու բարձր երաժշտութիւնը: Փոխարէնը, շեշտը դրուած Էր բովանդակային խօսքի վրայ:

8. Հանրահաւաքին կեդրոնական դէմքը շրջանցելով ամէն յետագայ քննադատութեան հաւանականութիւնն եւ ինքնառաջադրումի դէմ հնչող ապագայ խօսքերու բացասականութիւնը, ան հրապարակաւ իր թեկնածութիւնը առաջադրեց Վարչապետի պաշտօնին: Երեւութապէս ժխտական թուացող այս քայլով, խորքին մէջ ան շատ կարեւոր ժողովրդական բարոյոյթի մը առաջը առաւ: Մինչ ժողովուրդ մը անորոշութիւն չսիրեր եւ այդ անորոշութեան իրավիճակէն մեծապէս կ'օգտուի Փաշինեան, այսուհետեւ իր համակիրները գոնէ գիտեն, որ ո՞վ պէտք Է ըլլայ յաջորդ վարչապետը:

Հանրահաւաքին բացթողումները.

1. Նախաձեռնութիւնը չունեւ համապատասխան կազմակերպչական մարդուժ (team):

2. Օգտագործուած արհեստագիտութեան միջոցները անբաւարար էին: Օրինակ, հակառակ, որ մեծ թիւով լրատուամիջոցներ գոցեցին Նշուելիք ակնյայտ բացը, հանրահաւաքը կենդանի տեսերիզով Նոյնիսկ չսփռուեցաւ Ղազարեանին ընկերային համացանցի սեփական էջով, որուն միջոցաւ ան հաւաքի կոչը ուղղած Էր իր համակիրներուն: Կազմակերպող մարմնի մը չգոյութեան այլ չափանիշն Է սա:

3. Հռչակագրի ընթերցանութիւնը կեդրոնական անձին որդիին վստահիլը խորհրդանշական (երիտասարդը կը կրէր պատմական Հռչակագրին կազմութեան մէջ դեր ունեցած իր պապիկին անունը՝ Ֆերտիկանտ) ըլլալով հանդերձ սխալ Էր, մանաւանդ եթէ նկատի ունենանք այն պարագան, որ երիտասարդը չունեւ համապատասխան տուեալներ, նաեւ պատրաստուած ալ չէր: Նոյն խորհրդանշականութեամբ կարելի Էր վերադառնալ պատմութեան մէջ Հռչակագիրը որդեգրելու պահուն կայացած ընթերցանութեան ձայնագրութեան եւ այդ լսելի դարձնել հանրութեան:

Վերջապէս, երկու պարագային ալ շարքը կարելի Է երկարել, սակայն փաստը կը մնայ փաստ, որ իշխանափոխութեան պահանջը յետայսու ո՛չ մէկ կողմի սեփականաշնորհուած դաշտը չէ, եւ եթէ նման նախաձեռնութիւններու ընթացքը կարենայ իր հետեւողականութիւնը պահել, կազմակերպչական կարելիութիւնները կատարելագործել եւ աւելի եւս արհեստագիտական միջոցներ կիրառել, ապա կը կարողանայ ժողովուրդին անկախ մտածող, մտաւորական եւ ոչ անտարբեր, թէ յուսալքուած զանգուածը լուրջ զօրաշարժի ենթարկել եւ շուտով հասնիլ համընդհանուր նպատակներու յաջողութեան:

ՍԵՒԱ ԶԱՎՈՐԵԱՆ



Պատմութեան Մէջ Այսօր

Էտմոն Լեւոն Զիրազ

Էտմոն Լեւոն Զիրազ (Զիրազեան, 25 Օգոստոս 1923, Գահիրէ, Եգիպտոս - 11 Օգոստոս 2020, Փարիզի 6-րդ շրջան, Փարիզ, Իլ տը Ֆրանս, Ֆրանսա ֆրանսահայ ծաղրանկարիչ: Ծնած Է 1923 թուականին Թուրքիայէն Եգիպտոս հասած Լեւոն եւ Էլիզ Սեթեանի ընտանիքին մէջ, որոնք ունեցած են 4 զաւակներ՝ 3 աղջիկ եւ մէկ տղայ: Էտմոն եւ քոյրը՝ Անահիտը, երկուորեակներ են: Հայրը Էտմոնի անուանակոչուած Է ի պատիւ Ֆրանսացի պոետ բանաստեղծ եւ թատերագիր Էտմոն Ռոստանի: Զիրազը սորված Է Գահիրէի Նուպարեան Ազգային Վարժարանը, այնուհետեւ՝ Ֆրանսական գոլէճը: Նուագած Է շեփոր: 10 տարեկանին նկարած Է իր առաջին կտաւը՝ 17-րդ դարու կրօնական թեմաներով նկարի կրկնօրինակը, որ նուիրուած Է Պաղտատի Հայկական Եկեղեցիին: Զիրազի առաջին քաղաքական ծաղրանկարը տպագրուած Է «Image» «Parade», «La Réforme d'Alexandrie» եւ «Al Moussavar» ամսագիրները «Զիրազ» ստորագրութեամբ երբ ան 17 տարեկան Էր:

1946 թուականին Գահիրէէն տեղափոխուած Է Փարիզ: Սորված Է Փարիզի 'Académie de la Grande Chaumière-ը: 1950-1951 թուականներուն աշխատած Է «La Bataille» թերթը, 1951-1952 թուականներուն՝ «le Rouge et le Noir» (Կարմիր եւ Սեւ) , 1952-1954 թուականներուն՝ «Samedi Soir» (Շաբաթ Երեկոյ), 1955-1959 թուականներուն՝ «Ici Paris» (Այստեղ Է Փարիզ), ուրտեղ

ստեղծուած Է «Carnets de Belles» շարքը: Յետ պատերազմայ շրջանին ընկերացած Է երիտասարդ ծաղրանկարիչներու հետ՝ Պոլսէի, Էֆելի, Բելլուսի, Ֆեզանի, Բոսկի, Շավալի, Ալիքերի, Դուբուայի հետ: 1959 թուականին Մարսել Դասոն, ով արդէն նկատած Է Զիրազի տաղանդը, կը խնդրէ անոր ստեղծելու Les Parisiennes» («Փարիզ-գուհիներ») շարքն իր նորաստեղծ «Jours de France» թերթի համար:

Զիրազ հեղինակ Է աւելի քան 25.000 նկարներու, որոնց կ'ընկերանան երկխօսութիւններ եւ մեկնաբանութիւններ: Ան գրած Է «Ինքնակենսագրութիւն եւ յիշողութիւններ» գիրքը: Զիրազի «Փարիզ-գուհիներ» շարքի նկարները ցուցադրուած են Ֆրանսայի եւ արտերկրի բազմաթիւ պատկերասրահներու մէջ: 25 գործեր կը գտնուին Փարիզի «Զարնաւալէ» (Carnavalet) թանգարանին մէջ: Զիրազի այլոմները սկսան հրատարակել 1950-ական թուականներուն:

Զիրազ սահուն հայերէն կը խօսէր: Միայն վերջերս Է, որ ան առիթ ունեցած Էր Հայաստան այցելելու: Այս գծով, հարցազոյցի մը ընթացքին, ան ըսած Էր.-

«Հայաստան այցելեցի, որովհետեւ միշտ ալ կը մտածէի, թէ ամօթ Է, այսքան ատենէ Հայաստանը չեմ տեսած: ...Ուրիշ տեսակ կ'երեւակայէի: Մանաւանդ Երեւանը աշխարհի միւս քաղաքներուն կը նմանի...: Կը փափաքէի, որ աւելի հայկական ըլլար: Ամէն երկիր իմ գծագրութիւններէս կ'ուզեն... միակ Հայաստանը չուզեց: Հայաստանի ոչ մէկ թերթ ինձմէ գծագրութիւն ուզած Է: Ես ալ ըսի, որ տարօրինակ չէ...»:

Շրջանային Լուրեր

Թուրքիոյ Մէջ Կրօնամոլ Շրջանակներ Կը Փորձեն Արգելք Հանդիսանալ Բոլոր Այն Ձեռնարկներուն, Որոնք Իրենց Կամքով Չեն

Հետզհետեւ մտահոգիչ դարձած են զաւառապետներու կամայական որոշումներով փառատօններու կամ համերգներու արգիլուելու երեւոյթները: Այս տեսակի վերջին օրինակը տեղի ունեցաւ Պալքէսիի Պուրհանիէ գաւառին մէջ, ուր զաւառապետը գործադրումէն քանի մը օրեր առաջ յայտարարեց մօտաւոր փառատօնի չեղարկման լուրը: Այս մասին կը հաղորդէ «ԱԿՕՍ»-ը:

Գաւառապետը նաեւ ներկայացուց այս որոշումին տեղի տուող պատճառաբանութիւնները, որոնք իսկապէս ծիծաղաշարժ էին: Սակայն ծիծաղաշարժ ըլլալու կողքին կը պարզէին նաեւ երկրէ ներս տիրող մտայնութեան հասկացողութիւններու միտքը: Գաւառապետը կը նշէր թէ

նման որոշումի մը յանգած Է նկատի ունենալով իրեն հասած բողոքները: Իսկ ինչե՞ր էին այդ բողոքները եւ ո՞ր աղբիւրներէն եկած էին՝ այս հարցումին պատասխանը արդէն բացայայտ կը դարձնէր կատարուածը: Պուրհանիէի մէջ Իսմայիլ Աղա աղանդի անդամներ եւ «Գիտութիւնը Տարածելու Միութիւն»ը աղերսագրով մը դիմած Էր զաւառապետին, պնդելով թէ նախատեսուած ռաք փառատօնի մէջ երիտասարդներ ալքոլային խմիչքներ պիտի օգտագործեն եւ անոնց ազդեցութեան տակ ալ պիտի կայանան անկարգութեան դէպքեր, որոնք բացարձակապէս ցանկալի չեն մահմետական հասարակութեան համար:



Օտար Բարքեր

ԳԵՈՐԳ ԲԵՕՇԿԵՐԵԱՆ
«Չարթոն»-ի Երեց Աշխատակից

Պսակի մը Արարողութեան վտանգաւոր հետեւանքը . . .

Մեր գիտցած պսակի աւանդական արարողութիւնները կարծես ժամանակավրէպ դարձած են այլեւս, քսանմէկերորդ դարու ամերիկային մէջ: Հայերուն պսակադրութիւնները տակաւին տեղի կ'ունենան հայկական եկեղեցիներու մէջ, սակայն ամերիկացիներուն պսակադրութիւնները տեղի կ'ունենան քիչ մը ամէն տեղ:

Քիչ մը ամէն տեղ կրնայ ըլլալ նաեւ մը վրայ՝ ծովուն բացերը, ճաշարանի մը պարտեզին մէջ եւ կամ հօրենական բնակարանի մը ետեւի պարտեզին մէջ: Այս պատմութիւնը մեզի կու գայ Եւթահ Նահանգի Հէյըր քաղաքէն: Պսակադրութիւնը տեղի կ'ունենայ ճաշարանի մը պարտեզին մէջ եւ ամուսնացող զոյգը արհեստով արկածախնդրական դերակատարներ են, այսինքն՝ stunt doubles. Մէկ խօսքով՝ դերասաններու դերակատարութեան վտանգաւոր բաժինները իրենց կը վստահուի, որպէսզի դերասանները ապահով մնան:

Իսկ ի՞նչ է պսակադրութեան վտանգաւոր բաժինը, որուն ակնարկեցի վերնագիրին մէջ: Հիմա թոյլ տուէք որ բացատրեմ: Արդարեւ, արարողութենէն անմիջապէս վերջ՝ հարսն ու փեսան ինքզինքնին կրակի տուին (տես նկարը) եւ սկսան վազել, որպէսզի ուրիշներ չվարակուին կրակէն:


Բայց պէտք է յիշեմ որ անոնք անհրաժեշտ զգուշութիւնը ձեռք առած էին, որպէսզի կրակը չտարածուէր: Իրենց ետին բարեկամ մը կրակմարիչ գործիքով (fire extinguisher) հետեւին կը վազէր եւ զայն պիտի գործածէր յարկ եղած միջոցին:

Ամուսնացեալ ամուր նոյնիսկ հագած էին անկէզ (fireproof) բաճկոններ եւ հետեւին ունէին հակա-այրուածքային դեղ, ի պահանջելու յարկին՝ գործածելու համար:

Իսկ բաւական տեղ վազելէ ետք, անոնք կանգ առին եւ գետին պառկեցան, որպէսզի կրակը ինքնաբերաբար մարեր . . . Այսպէսով անվտանգ վերջ գտաւ անոնց արկածախնդրութիւնը!

Սուղ Հովանոց՝ որ Սակայն . . .

Աւանդական հովանոցը երկու դեր կը կատարէ: Ընդհանրապէս անձրեւի դէմ պաշտպանուելու համար կը գործածենք զոց գոյն հովանոց, իսկ արեւի դէմ պաշտպանուելու համար ալ՝ բաց գոյն հովանոց, այնպէս չէ՛: Բայց բաց գոյն հովանոցն ալ կրնանք անձրեւի դէմ պաշտպանուելու համար գործածել: Հովանոցներու գիւնը կը տարբերին՝ ըստ արտադրած ընկերութեան շուկայի վրայ ունեցած համբաւին: Սովորական հովանոցներու գիւնը կը տարուբերին 30 տոլարէն մինչեւ 120 տոլարի միջեւ:



Այսօրուան մեր նկարին մէջ ցուցադրուած հովանոցը արտադրուած է Նշանաւոր Կուչի ընկերութեան կողմէ: Ուրեմն՝ ըստ այդ ընկերութեան վարկին, այդ հովանոցը պէտք է ըլլայ շատ սուղ: Բայց առաջ որ գինին մասին խօսիմ, կ'ուզեմ ձեզի ներկայացնել Կուչի ընկերութիւնը:

Կուչի ընկերութիւնը հիմնուած է 1921-ին՝ Իտալիոյ Միլանօ քաղաքին մէջ, Կուչիօ Կուչի անունով մէկու մը կողմէ: Այդ ընկերութեան նշանաւոր արտադրութիւններն են կիներու ձեռքի պայուսակները, կօշիկները,

Երազանքներ Պատերազմից Յետոյ

ԶՐՈՒՆԵՆԳ՝ ՎԻՔԹՈՐԻԱ ՍԱՄՈՒԷԼԻ
«Չարթոն»-ի Աշխատակից

Շուշանիկը 44-օրեայ պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ՝ մօտ 4 ամիս աշխատել է արցախցի երեխաների հետ Երեւանի ժամանակաւոր կացարանում: Մասնագիտութեամբ լրագրող է: Պատերազմի ընթացքում մի քանի օրով մեկնում էր Արցախ՝ արդեն որպէս լրագրող: Եւ մինչ այսօր նա ամիսը մեկ-երկու անգամ վերադառնում է այնտեղ՝ տեսնելու իր աշակերտներին: Շուշանիկ կամ Ընկեր Շուշանիկ, ինչպէս դիմում են նրան երեխաները, զրուցել ենք Արցախում գտած-կորցրած բաների, երազանքների եւ մինչ այժմ այնտեղ ապրող երեխաների մասին:



Ի՞նչն է քեզ համար ճշող Արցախում:

Հետաքրքիր է, բայց պատերազմից յետոյ եկել եմ այն եզրակացութեանը, որ նախկինում երբեք չէի պատկերացնի, որ կարող եմ ինձ օտար զգալ իմ հայրենիքում: Այս օտարումը ես զգացել եմ դեռեւս պատերազմը չաւարտուած, երբ իմ հայրենիքում իմ ապահովութիւնը ստեղծելու համար ռուս խաղաղապահները մտան Դադիվանք: Ես լրագրող էի ու աշխատում էի ժամանակաւոր կացարանում, որը գտնուում էր Երեւանում, բայց որոշ ժամանակ ապրել եմ գիւղում ու ամեն օրուայ հետ այսօրուայ պէս յիշում եմ զգացողութիւններս, որ ինձ թողնում եմ բոլոր այն վայրերում, որտեղ լինում եմ՝ հողի, խոտի, ջրի, քարի ու մարդկանց յուսահատ հայեացքներում: Ես շատ բան թողեցի Արցախում, որը համեմատելու չէ բոլոր այն մարդկանց կորցրածի հետ, ովքեր թողել են իրենց ետեւում տունն ու տեղը: Ես դասաւանդել եմ Արցախի երեխաներին: Պատերազմից անցել է երկու տարի, բայց ես մինչեւ այժմ կապ եմ պահում դասարանիս հետ ու ամեն անգամ սիրտս կտոր-կտոր է լինում, երբ տեղեկանում եմ, որ տասներկուամեայ երեխաները ամեն օր նոր բարդութիւններ են յաղթահարում՝ հոսանագրկուած տներում գիրք կարդալուց մինչեւ զազի օրերով անջատումներ: Ամենամեծ ցաւն այն է, որ ես այստեղից օգնել չեմ կարող: Ամսական մէկ անգամ այցելում եմ իրենց ու ամեն անգամուայ հետ նկատում եմ, թէ որքան են հասունացել, իսկ ես ինձ յիշում եմ այդ տարիքում, երբ միակ անհանգստութիւնս հայոց լեզուի դասը չսովորելն էր ու այն էլ բակում մինչեւ երեկոյ անցկացնելու հետեւանքով: Ի սրտէս չէի ցանկանայ, որ երեխաներն ապրեն պատերազմի հետ քիթ քիթի ու լուսացնեն եւս մէկ գիշեր՝ կրակոցներից խուսափելով:

Ի՞նչը կարող է անվտանգութեան զգացում տալ:

Գիտե՛ս, ես կարճ ժամանակում հասկացայ, որ մարդուն մարդ է պէտք, մանաւանդ այն դէպքերում, երբ միակ ցանկութիւնդ յանձնուելն է ալիքներին: Սակայն առանձնայատուկ բարդ է, երբ մարդը միշտ լքում է: Մեզ սովորեցրել են, չէ՛, որ կան ասպետներ, որոնք ինչ-որ ժամանակ գալու են եւ փրկեն մեզ, եւ մենք վերջապէս ապրելու ենք անվտանգութեան մէջ: Սակայն կեանքը որքան կարող է, դաժան է երբեմն, եւ մենք մնում ենք առանց ասպետի օգնութեան:

Շար. Էջ 08

արդուզարդի պիտոյքները եւ այլն: Անշուշտ այդ ապրանքները շատ սուղ են եւ միայն հարուստները կրնան ձեռք ձգել զանոնք:

Կուչի ընկերութիւնը արտադրած է նաեւ հովանոցներ, որոնք շատ սուղ են, քանի կը կրեն այդ ընկերութեան անունը: Նկարին մէջ ցուցադրուած հովանոցը կ'արժէ 1,290 տոլար, իսկ անոնք Հինաստանի մէջ կը ծախուին 1,600 տոլարի:

Սակայն անպատեհութիւնը այդ հովանոցին այդ է որ անոնք անձրեւին դէմ չեն պաշտպանէր ենթական . . . Ուրեմն ամէն սուղ ապրանք պայման չէ որ գործնական ըլլայ:

Իսկ Կուչի ինքզինքն արդարացուցած է ըսելով թէ "It has good collector's value." Այսինքն՝ եթէ պահես, օրին մէկը կրնայ անոր արժեքը բազմապատկուիլ: Մէկ խօսքով՝ "Գնա մեծիր, եկուր սիրեմ":

Լիբանանահայ Կեանք

Իր Փառապանծ 60-Ամեակին Նուիրուած՝ Միութենական Ջերմութիւն Բուրող



Սկաուտական օրացոյցի ամենափնտռուած թուականն է տարեկան մեծ բանակումը եզրափակող խարուկահանդէսը, յատկապէս երբ կը զուգադիպի սկաուտական շարժումի հիմնադրութեան վաթսու-նամեակին:

Կիրակի, 14 Օգոստոս 2022-ի յետմիջօրէին, Ռաս Էլ Մեթնի մէջ տեղի ունեցաւ վաթսուամեայ ՀԵԸ Անդրանիկ Սեւան սկաուտական շարժումի տարեկան մեծ բանակումը եզրափակող խարուկահանդէսը: Բանակավայր այցելողներուն ուշադրութիւնը անմիջապէս կը գրաւէր փիւնիկը խորհրդանշող դէպի երկինք սլացող գեղեցիկ կայմը: Կայմին վրայ կը ծածանէին Լիբանանի, Հայաստանի, ՀԲԸՄ-ՀԵԸ-ի, SDL-ի եւ AEL-ի դրօշները: Կայմին փէշերուն տակ պաշտպանուած տարածութեան վրայ դասաւորուած էին սկաուտական խումբերուն վրանները: Նախքան խարուկահանդէսը, կէսօրէ

ետը ժամը 6.30-ին, ի ներկայութիւն մեծ թիւով միութենականներու, որոնց մէջ՝ ՀԵԸ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, ՀԵԸ Անդրանիկ Սեւանի Գործադիր Մարմնի պատասխանատուներ, մեծ թիւով միութենականներ, ծնողներ, ՀԵԸ-ի սկաուտական շարժումի հոգեւոր հովիւ, Ռըմէյի շրջանի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ քահանայ, Տէր Դեւոնոյ Լոշխաճեանի հովանաւորութեամբ տեղի ունեցաւ խաղողօրհնէք: Գերյարգելի Տէր հայրը, որ միշտ սիրայօժար կը մասնակցի ՀԵԸ-ի սկաուտական շարժումներու խարուկահանդէսի արարողութիւններուն, օրուան պատգամը փոխանցեց ներկաներուն: Օրինուած խաղողը բաժնուեցաւ ներկաներուն:

Խանդավառ այս մթնոլորտին մէջ ՀԵԸ «Անդրանիկ» փողերախումբին գլխաւորութեամբ, ՀԵԸ Անդրանիկ Սեւան սկաուտական շարժումի բոլոր խմբաւորումները, ընդհանուր



խմբապետ Ժիրայր Թօսունեան, փոխ ընդհանուր խմբապետուհի Սթեֆանի Զոթաիլեանի գլխաւորութեամբ, իրենց խմբապետներուն եւ փոխխմբապետներուն առաջնորդութեամբ հերթաբար մուտք գործեցին բանակավայր: Թիթեռներ՝ Գարմէն Զոթաիլեան, արծուիկներ՝ Զրիսթէլ Սթեֆանօ, գայլիկներ՝ Լեա Գոգեան, արեւուշ՝ Դալար Թօսունեան, Սեւոյ Զարաճեան, սկաուտներ՝ Կարօ Թաշճեան, քառավելներ՝ Փասքալ Գասպարեան, երէցներ՝ Կարօ Զոթաիլեան:

Լիբանանի, Հայաստանի, ՀԲԸՄ-ի, ՀԵԸ-ի եւ ՀԵԸ Անդրանիկ Սեւանի քայլերդներուն յոռնակայս ունկնդրութենէն ետք, ՀԵԸ Անդրանիկ փողերախումբը Ռաֆֆի Գոգեանի գլխաւորութեամբ կատարեց մթնոլորտին պատշաճ նուագներ: Սկաուտական խմբապետ՝ Կարօ Թաշճեան, (հայերէն), երէցներու առաջնորդ՝ Ճոյի Ապտէլսուր (արաբերէն), բարի գալուստ մաղթեցին

ներկաներուն:

ՀԵԸ Անդրանիկ Սեւանի Գործադիրի ատենապետ Նշան Ղորղոբեան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, յատկապէս՝ Ռաս Էլ Մեթնի քաղաքային պաշտպանութեան անդամ Մահեր Էլ Հալապիին, բանակումի ընթացքին ցուցաբերած ջերմ հոգածութեան համար: Այս առիթով գնահատանքի ՀԵԸ-ի «ֆուլար» մը նուիրուեցաւ անոր: Մասնայատուկ շնորհակալութիւն յայտնուեցաւ Զարակեօգեան հաստատութեան, որ սիրայօժար հոգացած էր սկաուտներուն կարիքները:

ՀԵԸ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վիգէն Զերչեան շնորհաւորեց վաթսուամեայ ՀԵԸ Անդրանիկ Սեւան սկաուտական շարժումը. «...Նուիրումի եւ ծառայութեան խորհրդանշիչ ՀԵԸ Անդրանիկ Սեւանը վաթսուն տարեկան է այսօր:

Շար. Էջ 05



Լիբանանահայ Կեանք

ՀԲԸՄ-ՅԵԸ Անդրանիկ Սեւան Սկաուտական Շարժումին Խարուկահանդեսը



Սկիզբը Էջ 04

Յարգանքով կը խոնարհինք անոր հիմնադիրներուն, մեզմէ առյաւէտ բաժնուած եւ մինչեւ օրս գործող բոլոր երախտաւորներուն առջեւ: Այստեղ, պարտք կը զգամ յիշատակելու ՀԵԸ Անդրանիկ Սեւանի տիպար նուիրեալներ՝ Յակոբ Թելվիզեանի, Հայկ Կոճիքեանի, Գեորգ Սանթրուքեանի, Գրիգոր Փորփոսեանի, Վարուժան Սալիպեանի, Հրայր Թօփուշեանի, Յարութ Կոճիկեանի, Յովիկ Առաքելեանի, Լենա Զարակեօգեանի անունները: Աւելցնեմ, որ երկար է շարքը:

Ահաւասիկ մեր առջեւն է հաւաքական աշխատանքի պարզ օրինակ մը, ուր բոլորդ միասնաբար, թիթեռ, արծուիկ, գայլիկ, սկաուտ, արեւնուշ, քառավել եւ երեց պատրաստեցիք այս բանակավայրը, իր գեղեցիկ կայմով, ճաշակով ձեւաւորուած վրաններով: Այս բոլորը վկայութիւն է յարատեւութեան եւ միեւնոյն գիտակցութեամբ աշխատանքը շարունակելու վճռականութեան:

Այս խանդավառ մթնոլորտին մէջ մեր շնորհակալութիւնը առա-

ջին հերթին կ'երթայ ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակային վարչութեան ատենապետ տիար Ժերար Թիւֆէնկճեանին եւ անդամներուն, որոնք մնայուն նեցուկ կը կենան ՀԵԸ-ի գործունեութիւններուն:

Յատուկ շնորհակալութիւն Միութեանս բարեկամ տիար Երջօ Սամուէլեանին, որ յարատեւ սատար կը կենայ մեր բոլոր գործունեութիւններուն:

Երախտագիտական խօսք ունիմ, ՀԵԸ-ի սկաուտական շարժումի հոգեւոր հովիւ, Որմէյլ շրջանի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ քահանայ, Տէր Ղեւոնդ Լոշիաճեանին, որուն բարեհաճ եւ սիրայօժար ներկայութիւնը, օրհնութեան պատգամ կը հաղորդէ մեր Միութեան միջոցառումներուն:

Շնորհակալութիւն մեր յարգելի ծնողներուն, որոնք սիրայօժարօրէն իրենց զաւակները կը վստահին մեզի՝ մեր միութեան: Անոնք համոզուած են, որ ՀԲԸՄ-ՅԵԸ-ի յարկին տակ իրենց զաւակները պիտի դառնան տիպար մարդ, լաւ հայեր եւ լաւ միութենականներ:

Մեր շնորհակալութեան խօսքը



կ'ուղղենք, ՀԵԸ Անդրանիկ Սեւան մասնաճիւղի Գործադիր Մարմնի ատենապետ Նշան Ղորղորեանին, Գործադիրի վարչական անդամներուն, ՀԵԸ Անդրանիկ Սեւանի սկաուտական խմբապետական կազմին, բոլոր խմբապետ -խմբապետուհիներուն եւ ընդհանուր խմբապետ եղբայր Ժիրայր Թօսունեանին:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք ՀԵԸ Անդրանիկ Սեւանի ծնողաց վարչութեան եւ բոլոր անոնց որոնք մնայուն կը քաջալերեն մեր բոլոր միջոցառումները:

Միասնաբար եւ վերանորոգ եռանդով դէպի նոր նուաճումներ» իր խօսքը փակեց ՀԵԸ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը:

ԱԷԼ-ի քումիսեր Ժեներալ՝ Լենա Իւրնէշեան- Զարակեօգեան փոխանցեց իր սրտի խօսքը:

ՀԲԸՄ-ՅԵԸ-ի Շրջանաւարտներու վարչութիւնը գեղեցիկ գաղափարը յղացած էր ՀԵԸ Անդրանիկ Սեւանի երկարամեայ ընդհանուր խմբապետ Գրիգոր Փորփոսեանի յիշատակին, մրցանակ մը յատկացնելով տարուան լաւագոյն խմբապետ կամ խմբապետուհիին: Յիշատակի առաջին մրցանակը շնորհուեցաւ Ժիրայր Թօսունեանին:

ՀԵԸ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վիգէն Չերչեան, ատենադպիր՝ Յակոբ Թելվիզեան, ՀԵԸ Անդրանիկ Սեւան գործադիր Մարմնի ատենապետ՝ Նշան Ղորղորեան, Ռաս Էլ Մեթիք քաղաքապետութեան նախագահ Ռաժա Ապու Որսլան, ԱԷԼ-ի նախագահ Չէյնա Զըֆուրի վարեցին վաթսուսամեակի խարոյկը:

Խարուկահանդեսի ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր՝ ուր յարուկին

առնող փիւնիկը կը խորհրդանշէր, սկաուտական եւ զանազան շարժումներուն մէջ ծառայող իր հին եւ նոր անդամ-անդամուհիներուն շնորհիւ դժուարութիւնները յաղթահարող փիւնիկը կը խորհրդանշէր: Գեղարուեստական յայտագիրը ճոխացած էր խմբային երգերով, պարերով:

Այս ուրախ առիթով տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ: Յատուկ շնորհակալութիւն յայտնուեցաւ բանակումին եւ խարուկահանդեսին յաջողութեան սատարող անհատներուն, հաստատութիւններուն:



Գեղարուեստական յայտագիրի ընթացքին պատահաբար վրայ ցուցադրուեցաւ ՀԵԸ Անդրանիկ Սեւանի 2021-22 տարեշրջանի գործունեութիւնը ամփոփող, նաեւ բանակումի կայմին պատրաստութիւնը ներկայացնող ժապաւէն մը:

Երեկոյին աւարտին ներկաները հրաւիրուեցան միասնական շուրջ-պարին, որմէ ետք միասնաբար կատարեցին «Ցոյնութեան երգ»-ը: Համատարած ուրախութիւն եւ յուզում պատած էր բանակավայրը: Իսկապէս, միայն սկաուտական շարժում չէր ՀԵԸ Անդրանիկ Սեւան սկաուտական շարժումը, այլ՝ ընտանիք:

ՀԲԸՄ-ՅԵԸ-Ի ՄԱՍԼՈՅ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ



«Քեզի Բախտ Բերի...»

ԿԱՐՕ ՊՕՅՃԱՆԵԱՆ

Փրասա Գլովիսի խոշոր հրապարակելն եւ քաղաքին հին կեդրոնի մօտիկ կողմերէն, առտուները գործի գացող մարդկային հեղեղը, Վենսեսլա՛ու Պրագ փողոցին նեղ մայթին վրայ երիզի պէս կ'երկարէր եւ ժամագործի խանութին առջեւէն խիտ եւ կուռ կը հոսէր:

Չանգունածային նոյն այս հոսքը, գրեթէ ամէն օր առտուայ ժամը եօթի մօտերը կը սկսէր, յետոյ ուրիշ կամ ուրիշ ու կէսի ատենները սովորաբար կը թեթեւնար ու ժխորը անկէ ետք փողոցին մէջ զգալիօրէն կը հասնդարտէր:

Ես քալող հոսանքին մէջ յաճախորդներ գտնելու յոյսով, խանութս կանուխէն կը բանայի, յոյսերը կը վառէի եւ այդ ժամուն գործի վրայ երեւնալու նպատակով, նախորդ օրը արդէն տասն անգամ քակած ժամացոյցներս անգամ մըն ալ կը քակէի եւ սեղանիս վառած յոյսին տակ զբաղած ձեւանալով յաճախորդի կը սպասէի:

Սակայն շատ անգամ բազմութիւնը առջեւի մայթէս մտազբաղ կ'անցներ, ներս ալ չէր նայեր ու եթէ պատահէր որ հովը երբեմն գորաւոր փչէր եւ խանութի բաց դռներն ներս մտնէր, դուրսէն միայն խօսակցութեան պատահիկներ եւ հեռացող ոտնաձայններ կը բերէր հետը...:

Խանութը բանալէս ի վեր այդպէս անցած էին օրերը, եւ հիմա ալ, հակառակ վրայէն մօտաւորապէս երկու ամիս անցած ըլլալուն, լաւանալու հեռանկարը դեռ մօտ չէր երեւեր:

Աշխատանքի սեղանիս առջեւ ես յաճախ կը յիշէի ճամբորդութեան մէջ ծանօթացած Պրագիցի բարեկամս՝ Օլիւնթոն եւ կը զոյգայի նաւուն վրայ իր հասցէն ուզած չըլլալուն համար, որովհետեւ կը խորհէի որ այս տեսակ դժուար ժամերուն թերեւս դիւրին ըլլար իր միջոցաւ նոր կամ տարբեր գործ ճարելը: Սակայն զոյգալը օգուտ չունէր այլեւս, եւ ես մինչեւ կացութեան յարմար ելք գտնելս, որոշեցի առաւօտները շարունակել կանուխէն խանութին երկաթէ դուռը վերցնել, եւ ճարահատ, առջեւէն անցնողներուն մէջ հնարաւոր յաճախորդներու սպասել:

* * *

Օգոստոսի երկրորդ կէսի օրերէն մէկուն մէջ, ճմեռուայ եղանակին ճիշտ մէջտեղը, օդը սոսկալի տաք կ'ընէր: Ժամը կեսօրուայ մօտ էր եւ Վենսեսլա՛ու Պրագ փողոցին վրայ եռուզեռը բաւական հանդարտած էր: Ես սովորականին պէս սեղանիս ետեւ նստած՝ աշխատիլ կը ձեւացնէի եւ մէկ աչքով ալ փողոցէն անցնողներէն եկող յաճախորդի կը սպասէի...:

Յանկարծ նիհար կին մը մագերէ թոյլ ձգած՝ աճապարանքով խանութ մտաւ, արագ քայլերով սեղանիս մօտեցաւ եւ փորթուկալերէնով

- Bom dia,- ըսաւ:

- Bom dia,- պատասխանեցի եւ կնոջ արտաքինէն դատելով,

- Այս կինը առ նուազն վաթսուներկու մը ըլլալու է խորհեցայ մտքէս:

Կինը թխադէմ էր: Լայն հագուստներով, թելին անցուցած խոշոր խոշոր պայուսակով, պտոյտի գացող բարի մեծ մայրիկի զուարթ հով մը կար վրան: Ալեխառն եւ երկար մագերէն ետեւը թոյլ ձգած՝ յայտնի էր թէ երիտասարդութեան գեղեցիկ եղած էր, բայց հիմա կարծես ժամանակի գործած աներին դէմ անտարբեր՝ կինը գունատ այտերը անփութօրէն շարունակ էր եւ խորշումած դէմքին շրթունքներուն վրայ ալ, կարմիր ներկը խնամքով չէր քսած:

Ան պայուսակէն Longines ժամացոյց մը հանեց եւ ինծի երկարեց:

Այդ մակնիշով զուգեղանական ժամացոյցները ես կը ճանչնայի: Գահիրէի մեր խանութին մէջ ատենին, անոնցմէ շատերը նորոգել է յետոյ, ըստ արիւստի սովորութեան, կափարիչներու ներսի կողմը նորոգութեան թուականը եւ մեր ստորագրութիւնը կը փորագրէինք ...:

Սակայն կնոջը ստորագրութիւն եւ փորագրութիւն չունէր: Ան երեւցածին համեմատ բաւական նոր էր եւ այդ պատճառով ալ պէտք եղած նորոգութիւնը դիւրին էր եւ չէր ուշանար:

Կինը որոշեց սպասել, եւ շուրջը նայուածք մը պտըտցուց: Յետոյ կարծես խօսելու համար անելի մօտեցաւ սեղանիս եւ

- Դուն այս խանութը նո՛ր բացած ես,- հարցուց ...

Ես տկար փորթուկալերէնով փորձեցի նախ ըսելիք բառերս միտքիս մէջ շարադրել, բայց չար բախտէս պատասխանած ժամանակս բառերը սխալ կարգով արտասանեցի ...:

Բայց կինը հասկցաւ ըսածներս եւ կարծես անելի հետաքրքրուած՝

- Դուն հոսկէ չես, ուրկէ՞ եկած ես,- հարցուց:

Ես լեզուի դժուարութեան պատճառով, այս անգամուն խուսափեցայ երկար պատասխաններ տալէ եւ կարծ՝

- Egipto,- ըսի:

Կինը սեղանիս դիմաց ոտքի կեցած, յանկարծ



- Mais non ...! պոռաց ֆրանսերէնով եւ ձեռքը արագ այտին տարաւ...

Ես շուարած կնոջ նայեցայ եւ «ի՛նչ պատահեցաւ» մտածեցի: Ան նշմարելով որ գործս ձգած զինք կը դիտէի, բաց ափը այտէն վար առաւ եւ

- Բայց է՛ս ալ Եգիպտոսէն եմ,- ըսաւ:

- Եգիպտոսէն ...ի՛նչ լա՛ւ եւ ի՛նչ զուգադիպութիւն ...

Ես ուրախացայ եւ լաւ զգացի:

Մինակ չէի այլեւս...:

Յանկարծ կարծես պզտիկ խանութին պատերը ետ քաշուեցան, սեղանիս վրայի վառած լամպի լոյսն ալ աչքիս գորաւոր երեւցաւ եւ

Եգիպտոսէն եկող աներեւոյթ կամուրջ մը, հին բարեկամներու պէս, կինը եւ զիս անմիջապէս իրար կապեց...:

Սակայն կինը ինծի պէս Գահիրէէն չէր: Ան Աղեքսանդրիա ծնած էր, Միջերկրական ծովը շատ կը սիրէր եւ 1800ական թուականներուն ճնշովայէն Եգիպտոս գաղթած հին ընտանիքէ սերած էր:

Կինը տարիներ առաջ հեռացած էր Եգիպտոսէն, բայց դեռ կարօտով կը յիշէր Աղեքսանդրիան, քաղաքը, ծովեզերքը, եւ իրենց տան մօտերը գտնուող խումբ մը բարձր արմաւենիներուն արեւին տակ հասունցած քաղցր պտուղները եւ կ'ափսոսար, որ Պրագիլի արմաւենիներուն վրայ արմաւենի չէին հասուննար: Կինը կը սիրէր իր ծնած քաղաքը: Դեռ չէր մոռցած Anthineo՝ sh եւ Trianonի կարկանդակավաճառ խանութները, հոն պատրաստուած անուշեղէնները եւ պաղպաղակները եւ խօսած ժամանակ ալ, կարծես աչքերուն մէջ ամբողջ Աղեքսանդրիան ծովեզերքի եւ երկնքի սահմաններէն ալ անդին, ծովեզերքի ճերմակ աւազներուն վրայ երազներէ ներշնչուած, ալիքներով եւ աւազով շինուած երեւակայական անհամար արձանիկներ կ'երեւային ...:

Ան լաւ պատմող էր, ծայրը խորունկ էր եւ խօսած ատենն ալ, բառերուն մէջ ծովուն անուշ կապոյտը կը խառնէր, որուն դէմ Գահիրէի մէջ, միայն ծիրանի գօտիներու վառ գոյները կրնային մրցիլ ...:

Բայց իր նիւթերը շատ էին եւ ատեն մը վերջ երբ կարգը կերակուրներուն հասաւ, կինը աղուոր բաներ յիշածի պէս

- Դեռ կը յիշե՛ս Մոլիսէյային, Ֆալաֆէլին եւ Եմենէն եկած սուրճին համը,- հարցուց...:

Կարօտը յանկարծ տեղէ մը խանութին մէջ մտաւ, թռաւ պատէ պատ զարնուեցաւ եւ սրտիս մէջ ինկաւ...:

Բայց կնոջ հետաքրքրութիւնը կառչած մնաց իր հարցումին ...

-Դեռ կը յիշե՛ս...դեռ կը յիշե՛ս... լսեցի ականջներուս մէջ կնոջ կրկնուող ձայնը...

-Ո՛վ չէր յիշէր անոնց համը... դեռ երեւուայ պէս բերնիս մէջ էր...:

Բայց իր հարցումները շատ էին ու դեռ չէին վերջացած:

-Կը յիշե՛ս այդ սուրճը... սրճարաններու մէջ Ahwa Sada, Ziyada, կամ ալ Mazbout ձեւերով կը հրամցուէր եւ ապսպրանքին հետ ալ միշտ գաւաթ մը սառած ջուր կու գար ափսէին մէջ,-շարունակեց կինը ...:

- Հապա սառած զովացուցիչները,- վայրկեան մը ընդհատեցի իր խօսքերը,- Spathisը, Orangosը, Stella գարեջուրը...:

Կինը չպատասխանեց, ձեռքով դէմքին մօտերը հով տալու նմանող արագ շարժում ըրաւ, յետոյ յանկարծ բան մը յիշած ըլլալու ձեւով պայուսակը բացաւ եւ մէջէն երկարաւուն, ողորկ ու բաց սրճագոյն պատեանով ընդդէմ մը հանեց եւ կէսը գոց ափին մէջ, միւս կէսն ալ ափէն դուրս օդին մէջ բարձրացուցած՝

-Ա՛ս ալ կը յիշե՛ս,- հարցուց:

Ես կը ճանչնայի ձեռքինը: Գիտէի ալ, որ անոր պատեանը դիւրաբեկ էր եւ Գահիրէի ժողովրդական թաղերու մէջ, այդ բոյսէն շինուած զովացուցիչներ շատ կը ծախուէին ամառուայ տաք օրերուն: Բայց չէի գիտեր որ այդ բոյսը Պրագիլի մէջ ալ գոյութիւն ունէր: Վայրկեան մը վարանեցայ եւ կասկածոտ

- Թամար Հիւսի՞ է,- հարցուցի:

- Ա՛՞գիտցար,- ըսաւ կինը,- բայց ասոր անունը Պրագիլի մէջ Թամարիկնո է

,-շարունակեց եւ ափը բացաւ:

Հիմա ժամանակը առանց զգալու սահած էր եւ ժամացոյցն ալ շատոնց նորոգուած՝ սեղանիս վրայ արդէն պատրաստ կը սպասէր...:

«Քեզի Բախտ Բերի...»

Սկիզբը էջ 06

Կինը թեկին կապեց ժամացույցը, դրան կողմը երկու քայլ առաւ, բայց հագիւ սեմին մօտեցած ետեւ դարձաւ եւ

- Գիտե՞ս այսօր ես քեզի բախտ բերի, - ըսաւ:

- Ինձի՞... բա՞խտ ...

Ճիշտ ի՞նչ բախտի մասին էր խօսածը, ես վայրկեանին չհասկցայ եւ չգիտցայ ինչ ըսելու: Միայն դրան մէջ, լոյսին դիմաց կեցած իր հասակը դիտեցի եւ անորոշ ժպտացի: Կինը կեցած տեղէն ձեռքը «Au Revoir» շարժեց, յետոյ ոտքը դուրս դրաւ եւ հին օրերու կարօտը խանութի սեմին ձգած՝ ցած մայթէն քայլեց ու ամբողջ Եգիպտոսը հետը տարաւ ...:

Իր երթալէն յետոյ սեղանիս վրայի ժամացույցը դեռ քանի մը անգամներ ալ քակեցի- կազմեցի, սակայն շատ չանցած ձանձրացայ եւ իրիկուայ դէմ ալ երբ օդը փոխուեցաւ եւ տաքութիւնն ալ բարեբախտաբար մեղմացաւ, որոշեցի դրան առջեւ մաքուր օդ շնչել եւ փողոցին անցուդարձը աչքէ անցնել:

Այդ ժամուն գործէն տուն դարձողներու պատճառով, փողոցին մէջ եռուզեռը սկսած էր շատնալ ու երթալով ւաւելնալ:

Յանկարծ դիմացի մայթէն անցնող բազմութեան մէջ, պայուսակով քալող մարդ մը տեսայ, որ վայրկեանին ինձի ծանօթ երեւցաւ:

Անմիջապէս դուրս վազեցի եւ աչքով մարդը փնտռեցի: Բայց ան արագ քալած էր եւ բազմութեան մէջ հետզհետէ կը հեռանար:

Փողոցին մէջտեղը երկու ափերս խողովակ ըրած, թոքերուս բոլոր ուժովը

- Օլիւթօ՞ւ պոռացի...

Առջեւ երկարահասակ, կարճահասակ եւ ամէն հասակներու մարդոց զանգուածը, ծովու ալիքներու ելեւէջով փողոցին մէջ կը յառաջանար...

- Օլիւթօ՞ւ պոռացի երկրորդ անգամ:

Մարդը կեցաւ ու ետեւ նայեցաւ:

Շուրջիս ձայները ականջներուս մէջ կարծես յանկարծ մարեցան ու ես չհաւատացի տեսածիս: Մարդը ի՞նչպէս Օլիւթօն էր:

- Ուրկէ՞, ու՞ր....

Քայլերս արագացուցի եւ երբ վերջապէս մօտեցայ, - Դու ի՞նչ գործ ունիս, - հարցուց ինքն ալ ինձի չափ զարմացած:

- Այս փողոցին վրայ ժամագործի խանութ բացած եմ ըսի:

- Ժամագործի՞... Բայց քեզի չէի՞ ըսած որ օդա- նաւային ընկերութեան մէջ գործ փնտռես ներդնեցաւ Օլիւթօն:

Ձայնին մէջ կշտամբանքի մեղմ շեշտ մը կար:

- Ըսած էիր եւ ես ալ յուսացած էի, որ Cruzeiro do Sul ընկերութեան մէջ աշխատած օրերու հին

ծանօթներդ մէկուն հասցէն կու տայիր ինձի, բայց վերջին օրը նաւուն վրայ չհանդիպեցանք իրարու, - պատասխանեցի:

Օլիւթօն աշխատած գրասենեակը մեր գտնուած փողոցին շատ մօտը կը գտնուէր: Այցետոմսին ետեւ, օդանաւի Varig ընկերութեան մէջ աշխատող Silvio Beck անունով մէկուն քանի մը տող մրոտեց եւ ինձի տալէ առաջ

- Տէ՛ս Կարօ՞, - Silvioն եւ ես պատերազմի տարի- ներուն, բաւական ժամանակ Cruzeiro do Sul ընկերութեան մէջ միասին աշխատած ենք, բայց անկէ յետոյ երկար տարիներ իրար չենք տեսած: Հիմա միայն գիտեմ, որ Silvioն այսօր Varig ընկերութեան մէջ կ'աշխատի, կարելոր պաշտօն ունի եւ վստահ եմ, որ եթէ իր կարելիութեան սահմաններուն մէջ ըլլայ կ'օգնէ քեզի: Գնա՛ բարեկէտն տար իրեն եւ յետոյ ալ, արդիւնքի մասին ինձի անպայման լուր տուր, - ըսաւ:

Փողոցին մէջ արեւը հետզհետէ կը տկարանար, օդը սկսած էր ցրտել, բայց առտուններու մարդկա- յին հոսանքին հակառակ ուղղութեամբ զացող բազմութիւնը դեռ կը շարունակէր յառաջանալ ու ւաւելնալ:

Հեռուն յանկարծ վանքի կամ եկեղեցիի մը զուարթ զանգակները ղողանջեցին: Ձայները չուշացան եւ վերի կապոյտին մէջ «Տիկ-Տոկ»-ի եղանակաւոր ալիքներու վերածուելու ու երբ իրիկնամուտի շառագունած երկնքին վրայ, տուն դարձող թռչուններու վերջին կանչերուն խառնուեցան, միտքիս մէջ գալիք յուսատու օրերու երգեր դարձան ...:

Գեղեցիկ էր իրիկնամուտի այդ ժամը եւ անբա- ցատրեփօրէն միտքարիչ բան մը կար ղողանջնե- րու օրօրուող ձայնին մէջ:

Ես այդ վայրկեանին Օլիւթօյին այցետոմսը ձեռքիս մէջ բռնած՝

- Արդեօք ա՞յս էր իտալացի կնոջ «քեզի բախտ բերի» ըսածը խորհեցայ եւ դեռ ալ առանց վստահ ըլլալու, որ այդ այցետոմսը պէտք եղած ժամուն ինձի իսկապէս օգտակար պիտի ըլլար, մէջս տարածուող հանդարտութիւն զգացի:

Վերը երկնքի կապոյտին մէջ վանքի զանգակնե- րուն ղողանջները կը շարունակուէին եւ ծովերու ալիքներու երբեմն մօտեցող, երբեմն ալ հեռացող ձայներուն պէս, օդին մէջ իրիկնային անդորրու- թիւն կը ցանէին ...:

Վայրկեանը վեհ էր եւ աղօթքի պէս ալ սրբազան ու ես պահ մը ներսէս յուսացի, որ բախտը վերջա- լոյսին երգող ղողանջներուն հետ, խաղալով գիս իր մօտ կը կանչէր...:

Օլիւթօն այցետոմսը գրպանիս խորը թաղեցի, եւ օդին մէջ լսուող ղողանջներուն «բախտ»-ի երգը մոխի ընելով հանդարտ քայլեցի...:


Քամիինաս, Պրագիլ

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Ոչինչ Չի Փոխուի

Իմ մահով ոչինչ չի փոխուի կեանքում, Ու չի պակասի աշխարհում ոչինչ, - Մի լոյս կմարի հինգերորդ հարկում, Կմթնէն մի պահ աչքերը քո ջինջ: Բայց հաւքերն էլի հարաւ կչուեն, Մանուկներն էլի կխաղան բակում, Կանաչներն էլի ցօղով կթրջուեն, Ծաղիկներն էլի կշնչեն մարգում:

Կվառուի լոյսը հինգերորդ հարկում, Կծպտան նորից աչքերը քո ջինջ, Իմ մահով ոչինչ չի փոխուի կեանքում, Եւ չի պակասի աշխարհում ոչինչ:



ՀԱՍՏ ՍԱՀԵԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

25 2022
ՕԳՈՍՏՈՍ

Կրկ երկ երբ Չրք Հնգ Ուրբ Ծբք

	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30	31			



ԱԼԴԵՐՏ ՊԱՊԻԿԵԱՆ
(1926 – 1997)
«Բնական վարդերով»

Հայկական Լուրեր

Կոչ Կ'ընենք Լիարժեք Կերպով Ապահովելու Տեղեկացուած Ըլլալու ԱՅ Քաղաքացիներուն Իրաւունքը. ԱՅ ՄԻՊ

Սկիզբը էջ 01

Նմանատիպ հարցերու մէջ կառավարութեան անգործութիւնը կամ կրաւորականութիւնը հանրութեան մէջ կը մեծցնէ անորոշութեան զգացողութիւնը, պատճառ կը դառնայ յաւելեալ մտահոգութեան եւ անհանգստութեան:

Վերոնշեալ հետեւանքներէն խուսափելու համար՝

Արցախի Հանրապետութեան կառավարութեան կոչ կ'ընենք լիարժեք կերպով ապահովելու տեղե- կացուած ըլլալու ԱՅ քաղաքացիներուն իրաւունքը եւ հանրային կեանքին առնչուող հարցերու շուրջ պարբերաբար, ժամանակին եւ պատշաճ կերպով հանդէս գալու իրազեկող յայտարարութիւննե- րով», - նշուած է յայտարարութեան մէջ:

Երազանքներ Պատերազմից Յետոյ

Սկիզբը էջ 03

Չեմ կարող ասել, թե ես երբեք պատերազմի ընթացքում զգացել եմ անվտանգ եւ նամանակահատված դրանից յետոյ ու պիտի պատասխանեմ, որ սա վախի պէս մի բան է, երբ Երեւանեան սրճարանում նստած դու կարող ես դուրս թռչել տեղիցդ՝ բարձր դիրքի վրայ լսելու պէս: Ո՛չ այստեղ եւ ո՛չ էլ Արցախում չկայ անվտանգության զգացողություն. քո հայրենիքում դու քեզ հետ միայնակ ես՝ քիթ քիթ քո վախերի, ապրումների ու կորուստների հետ, եւ հիմա անգամ անիմաստ է փնտռել ասպետների, որովհետեւ ոչ ոք իրեն իսկ չի կարողանում փրկել անգամ մահճակալի տակ թաքնուած դեւերից:

Ինչե՞ր ես գտնում Արցախում եւ ինչե՞ր ես կորցնում: Արցախում ես գտալ սերը, որը չափից դուրս մարդկային է եւ հոգատարութիւնը, երբ առանց լուսաւորութեան անցնում էին օրերն ու մաշկիս վրայ զգում էի իմ հայրենակցի հոգատարութիւնը, երբ տաք հագուստը դառնում էր ծածկոց: Սերը դէպի կրթութիւնը եւ ապրումակցումը: Ես տեսել եմ երեխաների աչքեր, որոնք իմ ներսում են, եւ երբ կարիք է զգացում անցնելու դէպի ներս, ես տեսնում եմ նոյն հայեացքները, որոնք մրուրի պէս իմ մէջ են ու լուսաւորում են ճանապարհս ամենամութ ժամանակներում անգամ: Ես կորցրել եմ միւս 2020-ի Շուշանիկին, այն աղջկան, ով հաւատում էր հրաշքների: Ես կորցրել եմ մի հայրենիք, որի հողում մանկութեանս ամենակիպ կանգնածները ընկել են ու շաղախել կարմիրով հողը ու հիմա, երբ մնացել են միայն լուսանկարները, ես կրկին վերադառնում եմ նրանց, ու ինչու է ամեն գիշեր իմ ականջում իրենց խօսքերը, որ Արցախն ամենասիրելի հայրենիքն է, որի հողի տակ թաղուած է իրենց սիրտը: Գիտե՞ս, ես կարող եմ իրենց սրտերը, որտեղ ես իմ 1,75 հասակով այնքան լայնութեամբ էի տեղաւորում: Հիմա տեղ չունեմ:

Ինչպէս ես տեսնում Արցախի փրկութիւնը:

Իմ դասարանից ոչ մի երեխայ չի լքում իր տունը, որտեղ

օրերով ոչ հոսանք կա, ոչ էլ ջուր: Զանի դեռ նրանք ապրում են, կ'ապրի եւ՝ գիւղը, եւ՝ քաղաքը: Ժամանակի ընթացքում, երբ նրանք մեծանան, չեն էլ գիտակցի, թե իրենց լինելիութեամբ ինչպէս են փրկել մի հայրենիք, որն իրենցից խլել է գրեթէ ամեն ինչ ու տեղը տուել է եւս մէկ գիշեր լուսացնելու ուրախութիւնը:

Ինչպէս ես տեսնում քո փրկութիւնը:

Դասարանումս մի տղայ ունեի՝ Տիգրանը: Ես սուր ներքոյ ունեի ու երբ տեսազանգով իր հետ խօսում էի, իր ձայնն ինձ խաղաղութիւն էր բերում: Այստեղ՝ Երեւանում, ես օգնում եմ Շուշիից տեղահանուած մի ընտանիքի ու քրոջս պէս մեծացնում երկու աղջիկ երեխաների եւ ամեն անգամ, երբ աշխարհն իր չար կողմ է ինձ ցոյց տալիս, ես ձգում եմ դէպի ԱմսաՆարէ քոյրիկութեանն ու խաղաղում եմ:

Միայն վերջերս հասկացայ, երբ դասարանս ու նրանք իմ կեանքում չլինեն, ես կը դադարեմ լինել Շուշանիկը:

Շուշանիկը ոչինչ չի կարող ստիպել մոռանալ Արցախը: Նա միշտ գնում է դասարանին տեսնելու, որ իր լինելիութեամբ նոյնպէս ապացուցի, որ կարելի է բարի լինել նաեւ այն ժամանակ, երբ աշխարհը երես է թեքել մեզից:

Ինչն է ամենաշատը ցանցնում Արցախում:

Ամսալի նկարած նկարները, որտեղ իրենց Շուշիի տունն է: Մի քանիսն ունեն իմ սենեակում, ես այդ նկարների մեծամասնութիւնում կամ, ու ինձ թւում է՝ ես միշտ այցելում եմ իրենց տուն ու մեր հայրենիք՝ Շուշի:

Ես ցաւում եմ, որ վեցամեայ աղջնակը պէտք է հայրենիքի մասին աղօս յիշողութիւններ ունենայ ու կառուցի իր ապագան իր տնից հեռու:

Որտե՞ղ ես ապրում քո երազանքները:

Երբ կորցրի ինձ շատ հարազատ մարդկանց, յոյսս կորցրել էի նորից ապրելու: Ես չունեմ երազանքներ ինձ համար: Երազանքներս ապրում են 24 հոգու մէջ, որոնց համար ես եղել եմ իսկական ընկեր Շուշանիկ: Եթէ իմ դասարանից որեւէ մէկը ցանկանում է դառնալ բժիշկ, ես ունեմ նոյն երազանքն, ինչ ինքը: Երբ Նարէն ու Աննան մեծանան, ես կ'ապրեմ իրենց իմ երազանքների մասին, որոնց կէսն իրենց հետ է կապում: Երբ առաջին անգամ գրկեցի Նարէին, երազում էի, որ կարողանամ ապահովել իր անվտանգութիւնը. դեռ երկու տարի է անցել, նա սկսել է խօսել ու քայլել, բայց իմ երազանքը նոյնն է, ու երբ նա մեծանայ, կ'ունենայ մի ձեռք, որը նրան սովորեցրել է ամուր կանգնել գետնին ու քայլել:

Երեւի թէ ես երազում եմ, որ այդ ձեռքը երբեք չթուլանայ բոլոր այն մարդկանց համար, որոնք նստուածք են տուել իմ մէջ:

Առողջապահական

Կնոջ Պտղաբերութիւնը Կ'ազդէ Անոր Կեանքի Տեւողութեան Վրայ

Կիններու օրկանիզմին մէջ մէկ օրկան աւելի քան երկու անգամ աւելի արագ կը ծերանայ, քան միւս բոլոր հիւսուածքները՝ վնաս հասցնելով ինչպէս պտղաբերութեան, այնպէս ալ առողջութեան երկարաժամկետ հեռանկարին մէջ:


«Երբ կին մը 20 կամ 30 տարեկան է, անոր հիւսուածքները կը գործեն իրենց արտադրողականութեան առաւելագոյն չափով, բայց ծուարանները արդէն ծերացման յստակ նշաններ ցոյց կու տան», - նշած է Զալիֆորնիոյ Պակի անուան ծերացման հետազոտութիւններու հիմնարկի փրոֆ. Ծենիֆօր Կարիսըն:

Ինչպէս Կարիսըն յայտնած է CNN-ին, երբ ծուարանները դաշտա-նադարի պատճառով կը դադրին աշխատել, ատոնք կը

դադրին հորմոններու «քոքթէյլ»ը արտադրելէն, որ կարեւոր են ընդհանուր առողջութեան համար: Նոյնիսկ առողջ կիններու մօտ այդ մէկը կտրուկ կը բարձրացնէ կաթուածի, սրտի հիւանդութիւններու, ճանաչողական անկումի, անքնութեան, օսթոփոքոսիզի, կշիռքի յաւելումի եւ արթիւտի վտանգը:

Դաշտանադարի տարիքը նոյնպէս կապուած է կեանքի տեւողութեան հետ: Ըստ Հիւսիսային Ամերիկայի դաշտանադարի միութեան տուեալներուն՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ բնական դաշտանադարի միջին տարիքը 51 է:

«Հետազոտութիւնները ցոյց կու տան, որ կինը, որոնց մօտ դաշտա-նադարը աւելի ուշ տեղի ունեցած



Է, աւելի երկար կ'ապրին եւ իրենց DNA-ը վերականգնելու աւելի մեծ կարողութիւն ունին, - ըսած է ան: Սակայն այն կիններու պարագային, որոնք բնական դաշտանադար կ'ունենան մինչեւ 40 տարեկան, շուտ մահանալու հաւանականութիւնը երկու անգամ աւելի բարձր է, քան այն կիններու պարագային, որոնք 50-էն 54 տարեկանին կ'անցնին բնական դաշտանադարի մէջէն: Տարիքի հետ ծուարեցիներու ծերացումը կ'արագանայ: 2010-ի

Յունուարի «անալիզ»ին մէջ մարդոց 95 առ հարիւրին մօտ 30 տարեկանին հասանելի կ'ըլլայ ծուարեցիներու միայն 12 առ հարիւրը, իսկ մինչեւ 40 տարեկան՝ միայն 3 առ հարիւրը: Գիտութեան տակաւին յայտնի չէ, թէ ինչո՞ւ ծուարաններու արագ ծերացում կը յառաջանայ:

Զանի որ գիտութիւնը շատ քիչ բան գիտէ կիններու վերարտադրողական «սայքլը»ին մասին, հետա-զոտութիւնները պէտք է սկիզբէն սկսիլ, նշած է Կարիսըն:

«Ինչո՞ւ կ'նոջ վերարտադրողական շրջանի տեւողութիւնը փոխկա-պակցուած է անոր կեանքի ընդհանուր տեւողութեան հետ... Այստեղ յստակ «ճենթիք» բաղադրիչ կայ, որ շատ կարեւոր է, եւ մենք այդ մէկը ընդհանրապէս չենք հասկնար», - եզրափակած է մասնագէտը: